Հաստատված է
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2019 թվականի նոյեմբերի –ի N --- որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2020 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ նաև՝ Տեսչական մարմին) գործառույթները նախկինում իրականացվել են ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից:

ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի թիվ 857-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության կանոնադրությամբ վերջինս ստեղծվել և հանդիսացել է ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչության իրավահաջորդը:

ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 444-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ ստեղծվել է ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը, իսկ համաձայն 11-րդ կետի՝ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչությունը 2017 թվականի օգոստոսի 21-ից համարվել է լուծարված:

Այսօր: ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշմամբ ընդունվել է ներկայումս գործող Տեսչական մարմնի Կանոնադրությունը, որի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմինը վերակազմավորվել է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի:

Որպես համեմատական անհրաժեշտ է նշել, որ ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչությունում առկա էր 457 հաստիք, իսկ ներկայումս առկա է 280-ը, որից համալրված է միայն 208-ը (առ 15.11.2019թ):

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության, աշխատողների

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում անվտանգության և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են իրեն վերապահված վերահսկողության ոլորտներում ռիսկերի կառավարումը, ՀՀ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական սպասարկման, դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում:

Տեսչական մարմնի վերակազմավորումից՝ 2018թ-ի հունիսի 11-ից հետո, մի շարք խնդիրներով պայմանավորված, հնարավորություն չի եղել ապահովել օրենսդրությամբ Տեսչական մարմնին վերապահված լիազորությունների լիարժեք իրականացումը:

Լիազորությունների իրականացման համար հիմնական խոչընդոտ է հանդիսացել մի շարք ներքին և արտաքին կանոնակարգումների բացակայությունը, մասնավորապես՝ «Ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման (այսուհետ՝ Ռիսկի մեթոդաբանություն), ոլորտային ստուգաթերթերի, համապատասխանաբար՝ ստուգումների տարեկան ծրագրի բացակայությունը:

Մինչ Տեսչական մարմնի ստեղծումը վերահսկողության ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտներում տարիներ շարունակ ստուգումներ չեն իրականացվել, բավարար չի եղել նաև իրականացված իրազեկման և կանխարգելիչ աշխատանքների մակարդակը:

Այսօրվա դրությամբ, Տեսչական մարմնի կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը ՀՀ կառավարության 2019 թվականի

օգոստոսի 22-ի թիվ 1124-Ն որոշմամբ հաստատվել է: Որից ելնելով Տեսչական մարմին առաջին անգամ, մինչև 2019թ-ի դեկտեմբերի 1-ը պետք է հրապարակի ստուգումների ծրագիրը և հաջորդ 2020թ-ին իրականացնի ռիսկերի վրա հիմնված պլանային ստուգումներ:

Կառուցվածք: Տեսչական մարմինը բաղկացած է հետևյալ տարածքային ստորաբաժանումներից, որոնք տեղաբաշխված են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում.

1. Երևան քաղաքի տարածքային կենտրոն (ներառում է Երևան քաղաքի և Կոտայքի մարզի տարածքները),
2. Հյուսիսային տարածքային կենտրոն (ներառում է Արագածոտնի, Շիրակի և Լոռու մարզերի տարածքները),
3. Հարավային տարածքային կենտրոն (ներառում է Արմավիրի և Արարատի մարզերի տարածքները),
4. Արևմտյան տարածքային կենտրոն (ներառում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերի տարածքները),
5. Արևելյան տարածքային կենտրոն (ներառում է Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի տարածքները):

Գործում են նաև հետևյալ սահմանային բժշկասանտիտարական հսկիչ կետերը.

1. «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
2. Մեղրիի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
3. Բավրայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
4. «Շիրակ» օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
5. Բագրատաշենի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
6. Այրում-Ջիլիզայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ,
7. Գոգավան-Պրիվոլնոյեի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am



Քարտեզ 1. Տեսչական մարմնի տեղաբաշխվածությունը ՀՀ տարածքում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն ծրագիրը չի արտացոլում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ընթացիկ գործունեությունը: Այն կազմվել է՝ հիմք ընդունելով «*Տեսչական մարմինների մասին*» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության «*Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 522-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին*» 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1124-Ն որոշմամբ հաստատված Ռիսկի մեթոդաբանությունը, ինչպես նաև Տեսչական մարմնում իրականացված վարչական վարույթները: Ծրագիրը բաղկացած է հետևյալ երեք բաժիններից.

1. ***ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների ընդհանուր իրավիճակը,***
2. ***ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը,***
3. ***ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված, ինչպես նաև կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ:***

Երրորդ բաժինը բաղկացած է հետևյալ երկու հավելվածներից.

1. *ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումներ*,
2. *ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ*:

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների ընդհանուր իրավիճակը

Տեսչական մարմնի գործունեության ընթացքում վերահսկողությունն իրականացվել է Տեսչական մարմնին ներկայացված դիմում-բողոքների հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ (ներառյալ ՀՀ վարչապետի հանձնարարականները) հարուցված վարչական վարույթների միջոցով:

2017 թվականի ընթացքում Տեսչական մարմինը դեռևս գտնվել է ձևավորման փուլում, և վարչական վարույթներ չեն իրականացվել:

2018 թվականի ընթացքում (սկսած ապրիլ ամսից) իրականացվել է **203**, իսկ **2019** թվականի 1-ից 3-րդ եռամսյակների ընթացքում՝ **1395** վարչական վարույթ:



Աղյուսակ 1. Իրականացված վարչական վարույթների քանակը 2018-2019թթ.

Վարչական վարույթների ընթացքում տնտեսավարող սուբյեկտների գերակշիռ մասում հայտնաբերվել են օրենսդրության պահանջների բազմաթիվ, այդ

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

թվում՝ անվտանգության տեսանկյունից բարձր ռիսկեր պարունակող խախտումներ, արձանագրվել է օրենսդրության պահանջների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության ցածր մակարդակ վերահսկողության բոլոր ոլորտներում:

Տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով իրականացվել են կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ՝ հիմք ընդունելով արձանագրված խախտումները և ռիսկերը:

2019 թվականի 1-3-րդ եռամսյակների ընթացքում իրականացվել է 1319 իրազեկման միջոցառում:



Աղյուսակ 2. Իրականացված կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների քանակը 2018-2019թթ.

ՀՀ օրենսդրությամբ Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության ենթական ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսավարողները հավուր պատշաճի իրազեկված չեն Տեսչական մարմնի

գոյության և լիազորությունների շրջանակի մասին: Դա է նաև պատճառը, որ վերահսկման ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարողները դեռևս բավարար չափով չեն պահպանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթները իրենց գործունեության ընթացքում: Վերոհիշյալ վարչական վարույթների արդյունքում տրված կարգադրերը ևս փաստում են այն մասին, որ Տեսչական մարմինն իր գործառույթներն իրականացնելիս վարչական լծակներով կարողանում է հասնել տվյալ ոլորտում էական փոփոխությունների, նույնիսկ՝ առանց վարչական տուգանք կիրառելու (օրինակ ԱԳԼՃԿ-ները):

2. Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Տեսչական մարմնում առկա են մի շարք խնդիրներ և դրանցով պայմանավորված ռիսկեր, որոնք խոչընդոտում են Տեսչական մարմնի բնականոն աշխատանքը և բացասաբար անդրադառնում վերահսկողության ոլորտների վրա:

2.1. Տեսչական մարմնի կադրային հագեցվածության և մարդկային ներուժի զարգացման անհրաժեշտություն.

Տեսչական մարմնում նախատեսված է 280 հաստիք, որից համալրված է 208 (առ 15.11.2019թ) հաստիք, կադրային հագեցվածությունը 74,2% է: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ քաղաքացիական ծառայողների հաստիքները 107-ն են (38,2%), իսկ քաղաքացիական պայմանագրով աշխատողների հաստիքները՝ 173-ը (61,8%): Որոշ ստորաբաժանումներում կամ դրանց առանձին բաժիններում կադրային հագեցվածությունը ցածր է 50%-ից: Նախատեսված է 2020թ.-ի ընթացքում քաղաքացիական պայմանագրով աշխատողների հաստիքները փոխել քաղաքացիական ծառայողների պաշտոններով, ինչպես նաև անհրաժեշտ է համալրել թափուր հաստիքները, իսկ առկա մարդկային ներուժը կարիք ունի մասնագիտական

գիտելիքների և հմտությունների շարունակական զարգացման և կատարելագործման:

2.2. Շենքային և բավարար նյութատեխնիկական պայմանների բացակայություն.

ՀՀ ԱՆ առողջապահական տեսչական մարմնի՝ 2017 թվականին կազմավորման ժամանակ Տեսչական մարմնին է փոխանցվել լուծարված տեսչության նախկին մնացորդային գույքի մասը, որը մինչ օրս չի ներառվել Տեսչական մարմնի հաշվեկշռում :

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի հուլիսի 18-ի «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» թիվ 893-Ա որոշման՝ ՀՀ ֆինանսների նախարարությանն ամրացված յոթ անվանում ավտոմեքենաներ հետ են վերցվել և ամրացվել Տեսչական մարմնին:

ՀՀ կառավարության 1119-Ա որոշմամբ (29.08.19թ) Տեսչական մարմնին է ամրացվել նաև ՀՀ վարչապետի աշխատակազմի վերցված թվով 20 համակարգիչ:

Տեսչական մարմնի ոչ բոլոր ՍԲՀԿ-ներն են ապահովված ստացիոնար ջերմաչափիչ սարքերով, որոնց աշխատանքի արդյունավետությունն առավել բարձր է, քան շարժական ջերմաչափիչ սարքերինը, ջերմաչափիչ սարքերի մի մասը շահագործման հետ կապված խնդիրներ ունեն:

Այս պահին Տեսչական մարմնի կենտրոնական ապարատի և Երևանի քաղաքի տարածքային կենտրոնի կողմից շահագործվող գրասենյակային տարածքները ևս ամրակցված չեն Տեսչական մարմնին: Նշյալ գրասենյակային տարածքները բավարար չեն Տեսչական մարմնի ամբողջ անձնակազմի համալրման համար:

Վերոնշյալ շենքային և սուղ գույքային պայմաններում բարդ է կազմակերպել Տեսչական մարմնի՝ ներկայումս համալրված 208 հաստիքների աշխատակիցների արդյունավետ աշխատանքի ապահովումը:

2.3. Ստուգումների գործընթացի բացակայություն.

Տեսչական մարմնի կարևորագույն խնդիրը ստուգումների գործընթացի բացակայությունն է, որի պայմաններում Տեսչական մարմինը չի իրականացնում համակարգված վերահսկողություն:

Լրամշակման փուլում են գտնվում ոլորտային ստուգաթերթերի նախագծերը, որոնց հաստատումից հետո Տեսչական մարմինը հնարավորություն կունենա իրականացնել ստուգումներ:

2.4.Ստուգումների իրականացման ժամանակ կանխատեսվող խնդիրները.

Տեսչական մարմինը, որպես վերահսկողական գործիք է կիրառում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգումների գործընթացը, որը պահանջում է հստակ կանոնակարգված մոտեցումներ:

Տեսչական մարմնի կողմից ստուգումների գործընթացի, բացի ստուգումների տարեկան ծրագրի հաստատումից, ներքին տեսանկյունից կանոնակարգմանը խոչընդոտում է հետևյալ միջոցառումների բացակայությունը.

2.4.1. Տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ուղեցույցի հաստատումը,

2.4.2. ստուգումների և վարչական վարույթների ընթացքում կիրառվող ձևաթղթերի սահմանումը,

2.4.3. հաշվառման գործընթացի (այդ թվում՝ հաշվառման մատյանների ներդրում) կանոնակարգումը,

2.4.4. տեսուչների համար վարչարարություն իրականացնելու համար պահանջվող անհրաժեշտ նյութատեխնիկական հագեցվածության ապահովումը,

2.4.5. վերահսկողության շրջանակներում կիրառվող ստուգաթերթերի վերաբերյալ տնտեսավարողների իրազեկումը,

2.4.6. տեսուչների համար նախատեսվող վարքագծի կանոնների սահմանումը,

2.4.7. ստուգումների իրականացման էլեկտրոնային ծրագրի առկայության ապահովումը:

2.5.Տեսչական մարմնի կողմից իրականացվող Վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական խնդիրներ:

Վերահսկողության իրականացման համար լրջագույն խոչընդոտ է ՀՀ օրենսդրության անկատարությունը:

Մասնավորապես.

- **Դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտում՝** թերի են «Դեղերի մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերով դեղերի ներմուծումը, իրացումը, առաքումը, պահպանման և կիրառումը կանոնակարգող նորմերը:
- **Բժշկական սպասարկման ոլորտում՝** կամ չեն ընդունվել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքից բխող, կամ ընդունվել են ոչ ամբողջությամբ կարգավորող ենթաօրենսդրական ակտեր: Ոլորտը կարգավորող այլ օրենքները և իրավական ակտերը չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին:
- **Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝** «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 1992թ.-ին), ինչպես նաև վերջինիս հիման վրա հաստատված սանիտարական նորմերը պարունակում են բազմաթիվ հնացած պահանջներ:

Առկա են ՍԲՀԿ-ների աշխատանքների հետ կապված հետևյալ խնդիրները.

- անկատար է ՍԲՀԿ-ների գործունեությունը կարգավորող նորմատիվ-իրավական դաշտը,
- բացակայում են համաճարակային տեսանկյունից անապահով վայրերից ՀՀ տարածք ժամանող ուղևորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու մեխանիզմները սահմանող ակտեր,

- բացակայում են կամ լիարժեք չեն տարբեր իրավիճակներում ՍԲՀԿ-ների գործողությունները կանոնակարգող մեթոդական ուղեցույցեր:

- **Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝**

- ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցների բացակայություն,
- շինարարական նորմատիվների բացակայություն
- մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատող կանանց, գիշերային ժամանակ կամ հերթափոխով աշխատողների պարտադիր բժշկական զննությունների իրականացման կարգի բացակայություն,
- դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների վերաբերյալ Տեսչական մարմնին ամբողջական տեղեկատվություն փոխանցելու պարտավորություն սահմանող հստակ նորմերի բացակայություն:

Լրջագույն խնդիր է նաև հանրության և տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության ցածր մակարդակը՝ Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտները կարգավորող օրենսդրության պահանջների վերաբերյալ:

3. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված, ինչպես նաև կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ

Սույն ծրագրի երկրորդ բաժնում շարադրված խնդիրները վերացնելու և Տեսչական մարմնի առավել արդյունավետ գործունեությունն ապահովելու համար 2020 թվականի ընթացքում նախատեսվում են իրականացնել վերոշարադրյալ խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ կանխարգելիչ և իրազեկման: Նշված միջոցառումները ներկայացված են Հավելված 1-ում և Հավելված 2-ում:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

Հավելված 1.

Միջոցառումներ
Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված

Հապավումներ՝
ՀՀ ԱԱՏՄ – Հայաստանի Հանրապետության առողջապահակ և աշխատանքի տեսչական մարմին
ԻԱՓՎ – իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
ԱԱՊՎ - աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության վարչություն
ԻԽՀՏ – իրազեկման և խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
տ/կ – տարածքային կենտրոն
ԱՀԿ – Առողջապահական համաշխարհային կազմակերպություն

N	Միջոցառում		Արդյունք (խնդիրների լուծում)	Կատարող ստորաբաժանում	Ժամկետ
1	2	3	4	5	6
1.	Հաշվետվությունների նոր մեխանիզմների ներդրում	1. առկա հաշվետվողական գործընթացների և ձևերի գույքագրում և ներկայացում ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	ՀՀ ԱԱՏՄ-ում հաշվետվողականության պատշաճ ապահովում (վարչական վարույթների և ստուգումների)	ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	13.01.2020թ.
		2. հաշվետվողականությունը ապահովող նախագծի մշակում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	17.01.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ներկայացում			22.01.2020թ.
		4. նախագիծը ըստ անհրաժեշտության լրամշակում և քննարկում			27.01.2020թ.
		5. նախագիծը ՀՀ ԱԱՏՄ ղեկավարին ներկայացում			29.01.2020թ.
2.	ՀՀ ԱԱՏՄ գործունեության համար անհրաժեշտ վարչարարության օրինակելի ձևաթղթերի հաստատում	1. նախագծի մշակում,	ՀՀ ԱԱՏՄ-ին վերապահված հսկողական գործառույթների իրականացման արդյունքում կազմվող փաստաթղթերի	ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	10.01.2020թ.
		2. նախագծի ներքին շրջանառություն,		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	15.01.2020թ.
		3. նախագծի ըստ անհրաժեշտության		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ և ՀՀ ԱԱՏՄ	20.01.2020թ.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

		լրամշակում և քննարկման կազմակերպում,	միատեսականության ապահովում և կազմվող փաստաթղթերի գործընթացի հեշտացում	կառուցվածքային ստորաբաժանումներ	
		4. նախագծի հաստատման ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	23.01.2020թ.
3.	ՀՀ ԱԱՏՄ ստուգումների ուղեցույցի նախագծի ներկայացում ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդի հաստատմանը	1. նախագծի մշակում	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից իրականացվող ստուգումների պլանավորման, նախապատրաստման, իրականացման և ստուգման արդյունքների ամփոփման կանոնակարգված գործընթացի առկայություն	ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	15.01.2020թ.
		2. նախագծի ներքին շրջանառություն,		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	20.01.2020թ.
		3. նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում և քննարկման կազմակերպում,		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ և ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	22.01.2020թ.
		4. նախագծի ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդի անդամներին նախնական շրջանառություն,		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	27.01.2020թ.
		5. նախագծի ներկայացում ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդի նիստի օրակարգում ներառում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդի 2020թ. 1-ին նիստ
4.	ՀՀ ԱԱՏՄ քաղաքացիական պաշտոնների փոխարինում քաղաքացիական ծառայության պաշտոններով	1. քաղաքացիական ծառայության թափուր տեղերը զբաղեցնելու համար հայտարարությունների հրապարակում	ՀՀ ԱԱՏՄ կադրային հագեցվածության ապահովում	ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	30.01.2020թ.
		2. հարցազրույցների կազմակերպում և անցկացում			20.02.2020թ.
		3. նշանակումներ			27.02.2020թ.
5.	ՀՀ ԱԱՏՄ թափուր հաստիքների համալրում	ՀՀ ԱԱՏՄ-ում աշխատանքի ընդունման գործընթացի կազմակերպում	ՀՀ ԱԱՏՄ կադրային հագեցվածության ապահովում	ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	շարունակական
6.	Տեսչական մարմնի ծառայողների վերապատրաստման ռազմավարական տարեկան ծրագրի մշակում և ՀՀ	1. առաջարկների ներկայացում	Տեսչական մարմնի ծառայողների վերապատրաստման	ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	24.01.2020թ.
		2. առաջարկների ամփոփում,		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	31.01.2020թ.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am

	ԱԱՏՄ կառավարման խորհրդին ներկայացում	3. առաջարկների ներկայացում Տեսչական մարմնի ղեկավարին,	բազմակողմանի, մանրամասն և նպատակաուղղված ռազմավարական տարեկան ծրագրի առկայություն: Նշվածով պայմանավորված Տեսչական մարմնի աշխատողների հիմնական ունակությունների և Տեսչական մարմնի իրավասության ոլորտի հետ կապված հատուկ մասնագիտական կարողությունների շարունակական կատարելագործման ապահովում		04.02.2020թ.
		4. համագործակցության առաջարկի ներկայացում ՀՀ ԱԱՏՄ ոլորտին առնչվող կրթական հաստատություններ և այլ կառույցներ		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	10.02.2020թ.
		5. ծրագրի նախագծի մշակում		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ և ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	24.02.2020թ.
		6. ծրագրի ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդի նիստի օրակարգում ներառում			ՀՀ ԱԱՏՄ կառավարման խորհրդի 2-րդ կամ 3-րդ նիստ
7.	Ստուգումների անցկացման համար դասընթացների իրականացում	1. դասընթացի նյութի մշակում	ՀՀ ԱԱՏՄ տեսուչների գիտելիքների բարձրացում և կատարելագործում	ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	27.01.2020թ.
		2. դասընթացի կազմակերպում և անցկացում՝			
		2.1. Երևան քաղաքի տ/կ			24.02.2020թ.
		2.2. Հարավային տ/կ			25.02.2020թ.
		2.3. Արևելյանի տ/կ			21.02.2020թ.
		2.4. Հյուսիսային տ/կ			26.02.2020թ.
		2.5. Արևմտյան տ/կ			28.02.2020թ.
8.	ՀՀ ԱԱՏՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատմանը ներկայացում	1. նախագծերի մշակում	ՀՀ ԱԱՏՄ-ի ստորաբաժանումների կանոնադրությունների առկայություն՝ գործառույթների հստակեցում	ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	29.01.2020թ.
		2. նախագծերի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	05.02.2020թ.
		3. նախագծերը ըստ անհրաժեշտության լրամշակում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	08.02.2020թ.

		4. Նախագծերը հաստատմանը ներկայացում			14.02.2020թ.
9.	ՀՀ ԱԱՏՄ վերահսկողության տեսուչների համար վարչարարություն իրականացնելու համար պահանջվող անհրաժեշտ նյութատեխնիկական հագեցվածության ապահովում:	1. Նյութատեխնիկական միջոցների ցանկի հաստատում	Ստուգումների և վարչական վարույթների իրականացման ընթացքում տեսուչների անվտանգության ապահովում, վերցվող իրերի և այլ պարագաների կանոնագարում և պատշաճություն	ՀՀ ԱԱՏՄ ոլորտային կառուցվածքային ստորաբաժանումներ	15.02.2020թ
		2. Գնման գործընթացի կազմակերպում		ՀՀ ԱԱՏՄ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչություն	27.02.2020թ
10.	ՀՀ ԱԱՏՄ տեսուչների համար նախատեսվող վարքագծի կանոնների նախագծի ներկայացում ՀՀ ԱԱՏՄ ղեկավարի հաստատմանը	1. ՀՀ ԱԱՏՄ ստորաբաժանումների կողմից պահանջարկների գնահատում և վերլուծություն, առաջարկությունների ներկայացում	ՀՀ ԱԱՏՄ տեսուչների համար վարվելակարգի առկայություն	ՀՀ ԱԱՏՄ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ,	21.02.2020թ.
		2.նախագծի մշակում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	28.02.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ,	04.03.2020թ.
		4. նախագիծը ըստ անհրաժեշտության լրամշակում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	09.03.2020թ.
		5. նախագիծը հաստատմանը ներկայացում			10.03.2020թ.
11.	ՀՀ ԱԱՏՄ-ի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում տեղակայում	1. ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումների պահանջարկների գնահատում և վերլուծություն, առաջարկությունների ներկայացում	ՀՀ ԱԱՏՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումների համապատասխան շենքերում հիմնական տեղակայում	ՀՀ ԱԱՏՄ ղեկավար ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	10.03.2020թ.
		2. նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման			23.03.2020թ.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

		գրասենյակ			
		3. Նախագծի հաստատումից հետո կառուցվածքային ստորաբաժանումների տեղակայում համապատասխան շենքեր՝			01.06.2020թ.
		3.1. կենտրոնական ապարատ			27.04.2020թ.
		3.2. Երևան քաղաքի տ/կ			04.05.2020թ.
		3.3. Հարավային տ/կ			18.05.2020թ.
		3.4. Արևմտյան տ/կ			25.05.2020թ.
		3.5. Արևելյան տ/կ			01.06.2020թ.
12.	Ստուգումների և վարչական վարույթների իրականացման էլեկտրոնային ծրագրի ապահովում՝ աշխատողների առողջության և անվտանգության ապահովման վարչության կողմից կիրառվող վերահսկողության ստուգաթերթերի թվայնացում, բազայի ներդրում	1. ստուգումների իրականացման ժամանակ ծրագրի փորձարկում	Վերահսկողության գործընթացի կանխատեսելիության և թափանցիկության ապահովում	ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ և ՀՀ ԱԱՏՄ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության բաժիններ	20.03.2020թ.
		2. շտկումների իրականացում		ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	13.04.2020թ.
		3. վերջնական գործարկում			29.04.2020թ.
13.	Բնակչության համար ՀՀ ԱԱՏՄ-ի հասանելիության մեխանիզմների ներդրում	1. առաջնահերթությունների և քայլերի գնահատում և վերլուծություն՝ առաջարկությունների ներկայացում	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից թափանցիկության սկզբունքի ապահովում	ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	23.03.2020թ.
		2. նախագծի մշակում		ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ բաժին	30.03.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	02.04.2020թ.
		4. նախագիծը ըստ անհրաժեշտության լրամշակում		ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ բաժին	08.04.2020թ.

		5. նախագիծը հաստատմանը ներկայացում			09.04.2020թ.
14.	Միջազգային համագործակցության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համագործակցության կապերի հաստատում և հետագա ընթացքի ապահովում	1. Տեսչական մարմնի գործառույթներին առնչվող միջազգային կառույցների ուսումնասիրություն,	Տեսչական մարմնի հեղինակության և կադրային որակի բարձրացում, և միջազգային ստանդարտներին համապատասխան գործունեության ապահովում:	ՀՀ ԱԱՏՄ ոլորտային վարչություններ	23.04.2020թ.
		2. համագործակցության նպատակի վերաբերյալ տեղեկանքի ներկայացում Տեսչական մարմնի ղեկավարին,			04.05.2020թ.
		3. առաջարկի մշակում և պատրաստում,			18.05.2020թ.
		4. առաջարկի ներկայացում միջազգային կառույց(ներ)ին, այդ թվում փորձի փոխանակման քայլեր նախատեսելու համար			
15.	Փորձագիտական կենտրոնների կողմից տրված եզրակացությունների վերլուծություն, խնդիրների վերհանման և կատարելագործման մեխանիզմների ներդրում	1. առաջարկությունների և քայլերի գնահատում և վերլուծություն	Պատշաճ վարչարարության իրականացում	ՀՀ ԱԱՏՄ վարչություններ և տարածքային կենտրոններ	01.06.2020թ.
		2. նախագծի մշակում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	08.06.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ վարչություններ և տարածքային կենտրոններ	15.06.2020թ.
		4. նախագծի լրամշակում և հաստատմանը ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	22.06.2020թ.
16.	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից ստուգումների ընթացքում ծագած խնդիրների, ստուգաթերթերի լրացման և դրանցում առկա հարցերի կարգավորման անհրաժեշտության վերաբերյալ կարգավորող մեխանիզմների նախագծի ներայացում ՀՀ ԱԱՏՄ ղեկավարի հաստատմանը	1. բացահայտված խնդիրների գույքագրում, և առաջարկությունների ներկայացում ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից ստուգումների պատշաճ իրականացում	ՀՀ ԱԱՏՄ ոլորտային ստորաբաժանումներ	01.06.2020թ.
		2. առաջարկությունների վերլուծություն և կարգավորումների նախագծի կազմում		ՀՀ ԱԱՏՄ ոլորտային ստորաբաժանումներ և ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	08.06.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն՝		ՀՀ ԱԱՏՄ ոլորտային ստորաբաժանումներ	22.06.2020թ.

		առաջարկությունների ներկայացում			
		4. նախագիծը ըստ անհրաժեշտության լրամշակում և քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ոլորտային ստորաբաժանումներ և ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	29.06.2020թ.
		5. նախագիծը ՀՀ ԱԱՏՄ ղեկավարի հաստատմանը ներկայացում			25.05.2020թ.
		6. Մոնիթորինգի իրականացում		ՀՀ ԱԱՏՄ ոլորտային ստորաբաժանումներ	15.10.2020թ.
Օրենսդրական առաջարկություններ					
17.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկության ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1.նախագծի կազմում	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից դեղերի շրջանառության վերահակողության իրականացման կանոնակարգում	ՀՀ ԱԱՏՄ դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն	15.06.2020թ.
		2. ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ ներկայացում			30.06.2020թ.
		2. նախագծի ներքին շրջանառություն		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	03.07.2020թ.
		3. նախագծի լրամշակում և ըստ անհրաժեշտության քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	13.07.2020թ.
		4. նախագծի ներկայացում			17.07.2020թ.
18.	«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայցում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. նախագծի մշակում	1) ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից նշված բնագավառներում՝ կոնկրետ հարցերով ստուգումների իրականացնելու մասին տնտեսավարող սուբյեկտին նախօրոք ծանուցման վերացում. 2) ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտում հսկիչ գնումների իրականացման իրավասության վերապահում	ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	24.07.2020թ.
		2. նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	29.07.2020թ.
		3. նախագիծը ըստ անհրաժեշտության լրամշակում		ՀՀ ԱԱՏՄ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ	06.08.2020թ.
		4. նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում			10.08.2020թ.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

19.	«ՀՀ ԱԱՏՄ հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. նախագծի մշակում,	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից կատարվող հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման գործընթացը	ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	24.07.2020թ.
		2. նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ստացում		ՀՀ ԱԱՏՄ դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն	29.07.2020թ.
		3. նախագիծը ըստ անհրաժեշտության լրամշակում		ՀՀ ԱԱՏՄ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ	06.08.2020թ.
		4. նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում			10.08.2020թ.
20.	«Դեղերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. Նախագծի առաջարկների ներկայացում ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից դեղերի շրջանառության վերահակողության իրականացման կանոնակարգում	ՀՀ ԱԱՏՄ դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն	27.07.2020թ.
		2. նախագծի ներքին շրջանառություն		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	13.08.2020թ.
		3. նախագծի լրամշակում և ըստ անհրաժեշտության քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	20.08.2020թ.
		4. նախագծի ներկայացում			28.08.2020թ.
21.	ԱԱՏՄ-ի ներգրավում որպես «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի շահառու	1. ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում,	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածով սահմանված օրենքի խախտմամբ դեղերի ներմուծման արարքը կատարման պահին բացահայտելու գործընթացի առկայություն	ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	01.09.2020թ.
		2. նախագծի քննարկում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ,		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ և ՀՀ ԱԱՏՄ դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն	30.09.2020թ.
		3. նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում և լրացուցիչ քննարկման կազմակերպում,		ՀՀ ԱԱՏՄ հիմնական մասնագիտական կառուցվածքային	15.10.2020թ.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

		4. նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում:		ստորաբաժանումներ	06.11.2020թ.
22.	ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 164-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայցում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. Առաջարկությունների ներկայացում ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից դեղերի հետկանչի իրականացման գործընթացի սահմանում	ՀՀ ԱԱՏՄ դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն	01.07.2020թ.
		2. նախագծի կազմում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	03.08.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն		ՀՀ ԱԱՏՄ տարածքային ստորաբաժանումներ	10.08.2020թ.
		4. նախագծի լրամշակում և ըստ անհրաժեշտության քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	17.08.2020թ.
		5. նախագծի ներկայացում			20.08.2020թ.
23.	ՀՀ կառավարության 2019 թվականի N 1080-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. Առաջարկությունների ներկայացում	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից դեղատոմսով բաց թողնվող դեղերի շրջանառության վերահակողության իրականացման ուժեղացում	ՀՀ ԱԱՏՄ դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն	02.08.2020թ.
		2. նախագծի կազմում և ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ ներկայացում			01.09.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն		ՀՀ ԱԱՏՄ տարածքային ստորաբաժանումներ	07.09.2020թ.
		4. նախագծի լրամշակում և ըստ անհրաժեշտության քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	14.09.2020թ.
		5. նախագծի ներկայացում			17.09.2020թ.
24.	ՀՀ կառավարության 2013 թվականի N 05-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների	1. Առաջարկությունների ներկայացում	Դեղատներում բժշկական թափոնների նկատմամբ վերահսկողության սահմանում	ՀՀ ԱԱՏՄ դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն	02.09.2020թ.
		2. նախագծի կազմում և ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ ներկայացում			01.10.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն		ՀՀ ԱԱՏՄ տարածքային ստորաբաժանումներ	12.10.2020թ.

	համակարգման գրասենյակ	4. նախագծի լրամշակում և ըստ անհրաժեշտության քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	19.10.2020թ.
		5. նախագծի ներկայացում			22.10.2020թ.
25.	ՀՀ կառավարության 2018 թվականի N 1256-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. Առաջարկությունների ներկայացում	Դեղերի առաքմանը ներկայացվող տեխնիկական և մասնագիտական պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության սահմանում	ՀՀ ԱԱՏՄ դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն	02.10.2020թ.
		2. նախագծի կազմում և ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ ներկայացում			12.10.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն		ՀՀ ԱԱՏՄ տարածքային ստորաբաժանումներ	21.10.2020թ.
		4. նախագծի լրամշակում և ըստ անհրաժեշտության քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	29.10.2020թ.
		5. նախագծի ներկայացում			02.11.2020թ.
26.	ՀՀ կառավարության 2010 թվականի N 17-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. Առաջարկությունների ներկայացում	Դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման նկատմամբ վերահսկողության սահմանում	ՀՀ ԱԱՏՄ դեղերի շրջանառության վերահսկողության վարչություն	02.11.2020թ.
		2. նախագծի կազմում և ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ ներկայացում			09.11.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն		ՀՀ ԱԱՏՄ տարածքային ստորաբաժանումներ	18.11.2020թ.
		4. նախագծի լրամշակում և ըստ անհրաժեշտության քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	25.11.2020թ.
		5. նախագծի ներկայացում			30.11.2020թ.
27.	«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. վերահսկողության ոլորտների ուսումնասիրություն և անհրաժեշտությունների գնահատում՝ առաջարկությունների ներկայացում	ՀՀ ԱԱՏՄ-ին լիցենզավորման պարտադիր պահանջների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորության վերապահում	ՀՀ ԱԱՏՄ բժշկական սպասարկամն վերահսկողության վարչություն	18.06.2020թ.
		2. նախագծի մշակում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	25.06.2020թ.
		3. նախագիծը հաստատմանը ներկայացում			09.07.2020թ.
28.	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից անձնական տվյալներ պարունակող	1. օրենսդրության ուսումնասիրություն	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից	ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	16.07.2020թ.

	տեղեկությունների ստացման լիազորություն վերապահելու մասին օրենսդրական փաթեթի առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	2. կարգավորումների նախագծի կազմում	անհատական տվյալների ստանալու իրավասության վերապահում		23.07.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	30.07.2020թ.
		4. նախագիծը ըստ անհրաժեշտության լրամշակում և քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	07.08.2020թ.
		5. նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ			12.08.2020թ.
29.	ՀՀ ԱԱՏՄ ՍԲՀԿ-ների օրենսդրությամբ լիազորությունների սահմանում	1. միջազգային փորձի ուսումնասիրում	ՀՀ ԱԱՏՄ-ի ՍԲՀԿ-ների կողմից օրենսդրությամբ սահմանված գործընթացի ապահովում	ՀՀ ԱԱՏՄ հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն	30.06.2020թ.
		2. նախագծի մշակում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	08.07.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն և ՀՀ ԱԱՏՄ ՍԲՀԿ-ներ	15.07.2020թ.
		4. նախագիծը ըստ անհրաժեշտության լրամշակում և քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	22.07.2020թ.
		5. նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում:			24.07.2020թ.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

30.	ՀՀ սանիտարական օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրենսդրական փաթեթի առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. ոլորտի ուսումնասիրություն՝ առաջարկությունների ներկայացում ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	ՀՀ սանիտարական օրենսդրության բացերի վերացում և կարգավորում	ՀՀ ԱԱՏՄ հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն և ՀՀ ԱԱՏՄ ՍԲՀԿ-ներ	03.08.2020թ.
		2. առաջարկությունների վերլուծություն և կարգավորումների նախագծի կազմում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	14.08.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	21.08.2020թ.
		4. նախագիծը ըստ անհրաժեշտության լրամշակում և քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	27.08.2020թ.
		5. նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում:			31.08.2020թ.
31.	«Շինարարություն (F էֆ)» ոլորտում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. նորմատիվ իրավական ակտն ընդունելու նպատակով քննարկումների կազմակերպում	Շինարարություն (F էֆ)» ոլորտում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների առկայություն	ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	30.06.2020թ.
		2. նախագծի ներկայացում			16.07.2020թ.
32.	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից թույլտվությունների նոր մեխանիզմների ներդրում	1. օրենսդրության ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում	Շինարարության նպատակով հողահատկացումները, նախագծման նորմերի	ՀՀ ԱԱՏՄ հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային	13.07.2020թ.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

		առաջարկությունների ներկայացում ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	շինարարության, վերակառուցման և կառուցապատման նախագծային ու նորմատիվային փաստաթղթերի հաստատումը, բնակելի շենքերի, մշակութային-կենցաղային և կոմունալ շինությունների, արդյունաբերական, տրանսպորտային և այլ ձեռնարկությունների շահագործումը թույլատրվությունների մեխանիզմների կատարելագործում	վերահսկողության վարչություն և ՀՀ ԱԱՏՄ տարածքային կենտրոններ	
		2. առաջարկությունների վերլուծություն և կարգավորումների նախագծի կազմում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	17.07.2020թ.
		3. նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն և ՀՀ ԱԱՏՄ տարածքային կենտրոններ	24.07.2020թ.
		4. նախագիծը ըստ անհրաժեշտության լրամշակում և քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	30.07.2020թ.
		5. նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում:			03.08.2020թ.
33.	ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 23-ի N 458-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. նախագծի մշակում	1. Որոշման մեջ տարընթերցման տեղիք տվող դրույթների հստակեցում, 2. Խմբակային, ծանր և մահացու ելքով դժբախտ դեպքերի ծառայողական քննություն իրականացնող հանձնաժողովում Տեսչական մարմնի ներկայացուցչի ներգրավում	ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	29.06.2020թ.
		2. նախագծի ներքին շրջանառություն		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	03.07.2020թ.
		3. նախագծի լրամշակում և մարմնի ղեկավարին ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	10.07.2020թ.
		4. նախագծի ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	15.07.2020թ.
34.	Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության	1. նախագծի մշակում	Աշխատողների առողջության պահպանման և	ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ և ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	17.07.2020 թ.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

	ապահովման հիմնական կանոններն ու նորմերը սահմանող ՀՀ կառավարության որոշման առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	2. նախագծի ներքին շրջանառություն	անվտանգության ապահովման հիմնական կանոնների ու նորմերի սահմանում	ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	24.07.2020 թ.
		3.նախագծի լրամշակում և մարմնի ղեկավարին ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	31.07.2020թ.
		4. նախագծի ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	04.08.2020թ.
35.	«Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատող կանանց, գիշերային ժամանակ կամ հերթափոխով աշխատողների պարտադիր բժշկական զննությունների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. նախագիծը մշակելու նպատակով քննարկումների կազմակերպում	Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատող կանանց, գիշերային ժամանակ կամ հերթափոխով աշխատողների պարտադիր բժշկական զննությունների իրականացման կարգի առկայություն	ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	10.08.2020 թ.
		2. նախագծի մշակում		ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ և ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	17.08.2020թ.
		3. մարմնի ղեկավարին ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	19.08.2020թ.
		4. նախագծի ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	24.08.2020թ.
36.	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1. նախագծի մշակում	ՀՀ ԱԱՏՄ-ին աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցներ սահմանելու իրավասության վերապահում	ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	05.11.2019թ.
		2. նախագծի ներքին շրջանառություն		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	14.11.2019թ.
		3. նախագծի լրամշակում և ըստ անհրաժեշտության քննարկում		ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	18.11.2019թ.
		4. նախագծի ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	20.11.2019թ.
37.	ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ	1. առաջարկությունների ձևավորում	Աշխատողների առողջության պահպանման և	ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	20.11.2019թ
		2.մարմնի ղեկավարի ղեկավարի հետ			25.11.2019թ.

	կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	համաձայնեցում	անվտանգության ապահովման հիմնական կանոններն ու նորմերը սահմանելու լիազորությունը ՀՀ կառավարությանը վերապահում		
		3. «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ աշխատանքային խմբի շրջանակներում առաջարկությունների ներկայացում			30.11.2019թ.
38.	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	1.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված տուգանքների չափերի վերանայում և վերադասության սկզբունքի ապահովում: Կատարված խախտման հանրային վտանգավորությանը համահունչ տուգանքների չափերի առկայություն Վարչական վարույթների արդյունքում տրվող վարչական ակտերը կազմել տարածքային կենտրոնների պետերի անունից՝ հետագայում բողոքարկման վարույթները վերադասի՝ Տեսչական մարմնի ղեկավարի կողմից քննելու համար	ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	07.09.2020թ.
		2. նախագծի ներքին շրջանառություն՝ առաջարկությունների ներկայացում		ՀՀ ԱԱՏՄ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ	14.09.2020թ.
		3. նախագծի ըստ անհրաժեշտության լրամշակում և լրացուցիչ քննարկման կազմակերպում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	21.09.2020թ.
		4. նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում:			25.09.2020թ.
39.	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից հարուցված վարչական վարույթների ընթացքում պատշաճ ծանուցումների հրապարակային գործընթացի	1. գործնական խնդիրների վերհանում, գնահատում և վերլուծություն՝ առաջարկությունների ներկայացում	ՀՀ ԱԱՏՄ-ի կողմից պատշաճ վարչարարության ապահովում	ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	06.07.2020թ.

	կարգավորումներն ապահովող առաջարկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	2. նախագծի մշակում		ՀՀ ԱԱՏՄ ԻԱՓՎ	20.07.2020թ.
		3. նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ ներկայացում			24.07.2020թ.

Հավելված 2

Միջոցառումներ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման 2020 թվականի

Հապավումներ՝

ՀՀ ԱԱՏՄ – Հայաստանի Հանրապետության առողջապահակ և աշխատանքի տեսչական մարմին

ԱԱՊՎ - աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության վարչություն

ԻԽՀՏ – իրազեկման և խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

ՀՍՀՎ – հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն

ՍԲՀԿ – սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ

N	Միջոցառում		Արդյունք (խնդիրների լուծում)	Կատարող ստորաբաժանում	Ժամկետ
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտներում գործող տնտեսավարողներին իրազեկումների կազմակերպում՝ վերահսկողության շրջանակներում կիրառվող ստուգաթերթերի վերաբերյալ (ստուգաթերթերի հրապարակում պաշտոնական կայքում և ֆեյբուքյան էջում)	Ստուգաթերթերի հրապարակում ՀՀ ԱԱՏՄ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում	Ոլորտում անվտանգության ապահովում, տնտեսավարողների գիտելիքների կատարելագործում	ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ	27.01.2020թ.
		Տնտեսավարողներին իրազեկման միջոցառումների ապահովում՝		ՀՀ ԱԱՏՄ ոլորտային վարչություններ, ՀՀ ԱԱՏՄ տարածքային ստորաբաժանումներ	
		1. դեղերի շրջանառության ոլորտում			15.01.2020թ.
		2. բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում			17.02.2020թ.
		3. աշխատողների աշխատողների առողջության և անվտանգության ապահովման ոլորտում			21.02.2020թ.
2.	Պաշտոնական կայքէջի տեղեկատվական շարունակական սպասարկում		Տեսչական մարմնի գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովում, տնտեսավարող սուբյեկտներին և հանրությանը իրազեկում	ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	Մշտապես
3.	«Թեժ գիծ» ծառայության կատարելագործում, փոքր հեռախոսակայանի (Mini ATS) գործարկում		Տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ստացված բողոքներին, բարձրացված խնդիրներին արագ արձագանքում, խորհրդատվության և հավաստի տեղեկատվության տրամադրման ապահովում	ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ	

4.	Տեսչական մարմնի տարբերանշանի փակցնում դեղատների վաճառասրահների դիմապակուն		Հանրության շրջանում Տեսչական մարմնի ճանաչելիության բարձրացում	ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ	01.04.2020թ. – 30.06.2020թ.
5.	Տեսչական մարմնի գործունեությունը լուսաբանող սոցիալական հոլովակների պատրաստում		Հանրության և տնտեսավարող սուբյեկտների շրջանում Տեսչական մարմնի ճանաչելիության բարձրացում	ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	01.04.2020թ. – 30.07.2020թ.
6.	Տեսչական մարմնի կողմից իրականացված աշխատանքների պարբերաբար լուսաբանում ԶԼՄ-ների միջոցով	1. Նյութի համաձայնեցում ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ	Տեսչական մարմնի հաշվետվողականության ապահովում	ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	2020թ. յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 1-ին աշխատանքային օր
		2. միջոցառման իրականացում		ՀՀ ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումներ	2020թ. յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 10-րդ աշխատանքային օր
7.	Սոցիալական հոլովակների պատրաստում սեզոնային վարակիչ հիվանդությունների վերաբերյալ	1. Առաջարկության ներկայացում՝	Հանրության իրազեկվածության՝ հիգիենիկ գիտելիքների բարձրացում, վարակիչ հիվանդությունների կանխարգելում	ՀՀ ԱԱՏՄ ՀՍՀՎ վարչություն	
		1.1. գրիպի և ՍՇՎՀ-ների վերաբերյալ			ձմռան ժամանակահատվածում
		1.2. աղիքային վարակիչ հիվանդությունների վերաբերյալ			ամռան ժամանակահատվածում
		2. հոլովակի պատրաստման գործընթաց		ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ	առաջարկությունը ստանալուց 20 օրյա ժամկետում
		3. հոլովակի տարածում			
8.	Վարակիչ հիվանդությունների	1. Առաջարկության ներկայացում՝	Հանրության	ՀՀ ԱԱՏՄ ՀՍՀՎ վարչություն	

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

	կանխարգելման վերաբերյալ բուկլետների թողարկում և տրամադրում՝ երեխաների համար կրթական կազմակերպությունների, իսկ չափահաս բնակչության համար՝ դեղատների և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների միջոցով	1.1. գրիպի և ՍՇՎՀ-ների վերաբերյալ	իրազեկվածության՝ հիգիենիկ գիտելիքների բարձրացում, վարակիչ հիվանդությունների կանխարգելում		ձմռան ժամանակահատվածում
		1.2. աղիքային վարակիչ հիվանդությունների վերաբերյալ			ամռան ժամանակահատվածում
		2. հոլովակի պատրաստման գործընթաց		ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ	առաջարկությունը ստանալուց 20 օրյա ժամկետում
		3. հոլովակի տարածում			
9.	Սննդային գործոնով պայմանավորված թունավորումների կանխարգելման վերաբերյալ իրազեկում	1. Իրազեկման նյութի նախապատրաստում և ՀՀ ԱԱՏՄ ղեկավարի հետ համաձայնեցում	Թունավորումների կանխարգելում	ՀՀ ԱԱՏՄ ՀՍՀՎ վարչություն	15.01.2020թ. 29.11.2020թ.
		2. Իրազեկման միջոցառման կազմակերպում		ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ	Ձմռան ժամանակահատվածում
		3. Իրազեկման իրականացում		ՀՀ ԱԱՏՄ ՀՍՀՎ վարչություն	
10.	Դասընթացների կազմակերպում բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների համար	1. Դասընթացի նյութի մշակում և համաձայնեցում ՀՀ ԱԱՏՄ ղեկավարի հետ	Բնակչության առողջության վրա աղմուկի բացասական ազդեցության կանխում, Գրիպի և սուր շնչառական վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելում	ՀՀ ԱԱՏՄ ՀՍՀՎ վարչություն	17.05.2020թ. 04.11.2020թ.
		2. դասընթացի անցկացման կազմակերպում		ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ	24.05.2020թ. 11.11.2020թ.
		3. դասընթացի անցկացում՝		ՀՀ ԱԱՏՄ ՀՍՀՎ վարչություն	31.05.2020թ.
		3.1. հանրային սննդի կազմակերպությունների համար			
		3.2. հանրակրթական դպրոցների և ՆՈՒՀ-երի համար			15.11.2020թ.
11.	Աշխատանքի պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ իրազեկման միջոցառման կազմակերպում և իրականացում	1. Իրազեկման նյութի մշակում և համաձայնեցում ՀՀ ԱԱՏՄ ղեկավարի հետ	Առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքի իրացման ուղղությամբ գործատուների և աշխատողների իրավունքների	ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	14.04.2020թ.
		2. իրազեկման միջոցառման անցկացման կազմակերպում		ՀՀ ԱԱՏՄ ԻԽՀՏ	21.04.2020թ.

		3. իրազեկման միջոցառման անցկացում	և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՀՀ ԱԱՏՄ ԱԱՊՎ	28.04.2020թ.
12.	Վարակիչ հիվանդությունների տեսանկյունից անապահով երկրներից ժամանող և այդ երկրներ մեկնող ուղևորներին սպառնացող վտանգների մասին իրազեկում, համապատասխան խորհրդատվության տրամադրում		ՀՀ տարած վարակիչ հիվանդությունների ներբերման և տարածքման կանխարգելում	ՀՀ ԱԱՏՄ ՀՍՀՎ ՀՀ ԱԱՏՄ ՍԲՀԿ-ներ	մշտապես

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am